ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-21-4-2

ք. Երևան 06 .05.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Գզրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8 350 000 (ութ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներին (ամիսներին): Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Տոյոտա-Երևան» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16062005562600
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01557589
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	գլխավոր տնօրեն
Ա. ԱՎԱԳՅԱՆ	Վ.ԳԶՐԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԾՁԲ-21-4-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Երաշխիքային սպասարկման ծառայություններ այդ թվում		Վազք կմ (պարբերականություն)	Ավտոմեքենայի մակնիշը	
			Toyota Corolla GAS	Toyota FORTUNER
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Շարժիչի յուղի և զտիչի փոխարինում	7,000 կմ	Անվճար	Անվճար
2	Օդի զտիչի փոխարինում	14,000 կմ	Անվճար	Անվճար
3	Օդորակիչի զտիչի փոխարինում	14,000 կմ	Անվճար	Անվճար
4	Ավտոմեքենայի յուղման աշխատանքներ	14,000 կմ	Անվճար	Անվճար
5	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	40,000 կմ	Անվճար	Անվճար
6	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	40,000-70,000 կմ	Անվճար	Անվճար
7	Վառոցքի մոմի փոխարինում 1կ/տ	70,000-80,000 կմ	Անվճար	Անվճար
8	Փոխ.տուփի յուղի փոխարինում,քարտերի/մաքրում	70,000-80,000 կմ	Անվճար	Անվճար
9	Փոխ.տուփի յուղի ավելացում	-	Անվճար	Անվճար
10	Փոխ.տուփի զտիչի փոխարինում	70,000-80,000 կմ	Անվճար	Անվճար
11	Բաժանարար տուփի յուղի փոխարինում	70,000-80,000 կմ	Անվճար	Անվճար
12	Բաժանարար տուփի յուղի ավելացում	-	Անվճար	Անվճար
13	Առջևի կամ հետևի կամրջակի յուղի փոխարինում	70,000-80,000 կմ	Անվճար	Անվճար
14	Արգելակման կոճղակի փոխարինում դիմացի	-	Անվճար	Անվճար
15	Արգելակման կոճղակի փոխարինում հետևի	-	Անվճար	Անվճար
16	Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում	60,000 կմ	Անվճար	Անվճար
17	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում	100,000-150000	Անվճար	Անվճար
18	Շարժիչի հովացման հեղուկի ավելացում	-	Անվճար	Անվճար
19	Ապակեվալացիչ չսառչող հեղուկի լիցքավորում	-	Անվճար	Անվճար
20	Արգելակման հեղուկի փոխարինում	100,000 կմ	Անվճար	Անվճար
21	Արգելակման հեղուկի ավելացում	-	Անվճար	Անվճար
22	Արգելակման համակարգի կարգավորում, օդահանում	-	Անվճար	Անվճար
23	Ղեկի հիդրոուժեղարարի յուղի փոխարինում	100,000 կմ	Անվճար	Անվճար
24	Ղեկի հիդրոուժեղարարի յուղի ավելացում	-	Անվճար	Անվճար
25	Վերևի լծակի վռանների փոխարինում	-	Անվճար	Անվճար
26	Ներքևի լծակի վռանների փոխարինում	-	Անվճար	Անվճար
27	Լծակի փոխարինում	-	Անվճար	Անվճար
28	Կայունարարի վռանների փոխարինում	-	Անվճար	Անվճար
29	Կայունարարի կանգնակի փոխարինում	-	Անվճար	Անվճար
30	Անվաթացքի կարգավորում (ռազվալ)	-	13,000	14,000
31	Անվադողերի փոխարինում	-	13,000	15,000
32	Անվադողերի բալանսավորում	-	7,000	8,000
33	Ինժեկտորների լվացում	-	-	-

34	Էլեկտրական տվիչների հաղորդալարերի նորոգում շարժիչի հատվածում	-	20,000	20,000
35	Դռան հաղորդալարերի նորոգում		20,000	20,000
36	Տանիքի հաղորդալարերի նորոգում		160,000	160,000
37	Ցուցիչների Վահանակի էլեկտրոլարերի նորոգում		170,000	170,000
38	Գեներատորի նորոգում		150,000	150,000
39	Համակարգչային ախտորոշում թերությունների վերացումով	-	Անվճար	Անվճար
40	Հեռահար լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար
41	Մոտակա լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար
42	Հակամառախուղային լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար
43	Արգելակի լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար
44	Արգելակման սկավառակի հղկում (զույգը)	-	18,000	18,000
45	Շարժիչի փոկի փոխարինում	80,000 կմ	Անվճար	Անվճար
46	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	-	Անվճար	Անվճար
47	Շարժիչի փոկի ձգանի փոխարինում	-	Անվճար	Անվճար
48	Օդորակիչի լիցքավորում	-	30,000	30,000
49	Հոդակապի դրսի կամ ներսի փոշեթիկնոցի փոխարինում	-	Անվճար	Անվճար
50	Փականագործական աշխատանքներ՝ 1 ժ	-	Անվճար	Անվճար
51	Լծակի հեղույսի փոխարինում	-	Անվճար	Անվճար
52	Ձսպակի վռանի փոխարինում	-	Անվճար	Անվճար
53	Մետաղածողի վռանի փոխարինում	-	Անվճար	Անվճար
54	Շարժիչի բարձիկի փոխարինում	-	Անվճար	Անվճար
55	Ձեռքի արգելակման կոճղակների կարգաբերում	-	Անվճար	Անվճար
56	Տեխ. զննում	-	Անվճար	Անվճար
57	Դիագնոստիկա	-	Անվճար	Անվճար
58	Անիվի մանեկի փոխարինում	-	5,000	5,000
59	Կիսաառնու փոշեթիկնոցի փոխարինում	-	18000	18000
60	Կայունարարի վռանների փոխարինում	-	Անվճար	Անվճար
61	Յուղման աշխատանքներ	7000 կմ	-	5,000
62	Անիվի ճնշման տվիչ փոխարինում	-	5,000	5,000
63	Անիվի ճնշման տվիչ ծրագրավորում	-	15,000	15,000
64	Բանալիի ծրագրավորում	-	15,000	15,000
65	Արգելակման սուպորտների նորոգում	-	30,000	30,000
ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ		Վազք կմ (պարբերաբար)	Toyota Corolla GAS	Toyota FORTUNER
			Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Փոխանցման տուփի յուղ 1լ	60,000-80,000 կմ	11,000	8000
2	Փոխանցման տուփի զտիչ	-	38,000	44000
3	Փոխանցման տուփի միջադիր	-	7,000	24000
4	Շարժիչի յուղի զտիչ	-	3,500	3500
5	Շարժիչի յուղ 1լ	7000 կմ	4,300	4,300
6	Շարժիչի հովացման հեղուկ 1լ	100,000	5,000	5,000
7	Ապակիների չսառչող հեղուկ 1լ	-	-	-
8	Հիդրավլիկի յուղ 1լ	100,000 կմ	-	24,000
9	Արգելակման հեղուկ 1լ	40,000 կմ	6,000	6,000
10	Հեռահար լամպ 1 հատ	-	10,000	27000

11	Մոտակա լամպ 1 հատ	-	11,000	27000
12	Հակամառախուղային լամպ 1 հատ	-	11,000	12000
13	Արգելակման կոճղակ դիմացի 1 կ/տ	15000-20,000	42,000	40,000
14	Արգելակման կոճղակ հետևի 1կ/տ	30000-35000	24,000	31,000
15	Գեներատորի փոկ	80,000-90,000 կմ	17,000	32,000
16	Վառելիքի զտիչ	40,000 կմ	82,000	17,000
17	Օդի զտիչ	14,000	7,000	15,000
18	Սրահի օդի զտիչ	20,000 կմ	10,000	10,000
19	Վառոցքի մոմ 1հատ	70,000-80,000 կմ	8,000	10,000
20	Բաժանարար տուփի յուղ 1լ	50,000կմ	-	10,000
21	Կամրջակի յուղ 1լ	50,000կմ	-	6,000
22	Լծակի հեղուս մանեկով ներքևի 1 կ/տ	-	23,000	92,000
23	Լծակի հեղուս մանեկով վերևի 1 կ/տ	-	-	58,000
24	Լծակի վռաններ վերևի 1հատ	-	-	24000
25	Լծակի վռաններ ներքևի 1հատ	-	-	54,000
26	Կայունարարի վռաններ առջևի 1հատ	-	15,000	14,000
27	Կայունարարի վռաններ հետևի 1հատ	-	-	11,000
28	Կայունարարի կանգնակներ առջևի 1հատ	-	42,000	73,000
29	Կայունարարի կանգնակներ հետևի 1հատ	-	-	45,000
30	Ինժեկտորի մաքրման հեղուկ	20,000կմ	10,000	10,000
31	Ձեռքի արգելակման կոճղակ 1կ/տ	60,000 կմ	24,000	45,000
32	Արգելակման լապտերի լամպ 1 հատ	-	3,000	3,000
33	Շարժիչի փոկի հոլովակ 1 հատ	-	126000	134,000
34	Շարժիչի փոկի ձգան 1 հատ	-	-	109,000
35	Կիսասառնու փոշեթիկնոց դրսի 1կ/տ	-	49,000	51,000
36	Կիսասառնու փոշեթիկնոց ներսի 1կ/տ	-	30,000	31,000
37	Ապակեմաքրիչի ռետիններ 1հատ	-	13,000	12,000
38	Շարժիչի առջևի բաձիկ	-	43,000	52,000
39	Շարժիչի հետևի բարձիկ	-	63,000	59,000
40	Շարժիչի բարձիկ աջ	-	106,000	59,000
41	Շարժիչի բարձիկ ձախ		72,000	52,000
42	Շարժիչի կարտերի տապօղակ	-	600	600

Ծառայության մատուցումը՝ իրականացնել 2021թ. 1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացված հայտերի, սակայն ոչ ուշ քան 10.12.2021թ :

Փոխված դետալների ժամանակից շուտ խափանման համար պատասխանատվություն է կրում մատուցողը:

Այլ պահանջներ - ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:

Մատուցվող ծառայությունների առավելագույն գումարներն են՝1- միավոր Toyota Corolla GAS-350,000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, 18 -միավոր Toyota FORTUNER - 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, ավտոմեքենաների ծառայությունների պայմանագրի առավելագույն գինը կազմում է 8 350 000 (ութ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տոյոտա-Երևան » ՍՊԸ
գլխավոր տնօրեն

Վ.ԳԶՈՒԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ՄԱԾՁԲ-21-4-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ. ընդ որում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություններ	71631260/1	2 087 500	4 175 000	6 262 500	8 350 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տոյոտա-Երևան » ՍՊԸ

գլխավոր տնօրեն

Վ.ԳԶՐԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ՄԱԾՁԲ-21-4-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՄԱԾՁԲ-21-4-2 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն